ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Ապրիլի 21-23-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի 4-րդ գիտական սեսիան նվիրված սովետական գրականության հարցերին։

Նրա խուսեալի պետք է համարել, որ Գրականության Ինստիտուտը, Համ. Կ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի որոշումներից և ընկ. Ժդանովի զեկուցումից հետո համապատասխան եզրակացության գալով, այս գիտական սեսիայում լսեց և քննարկեց գլխավորապես սովետական գրականությանը վերաբերող հարցեր։

Սեսիայի առաջին օրը լսվեց՝ «Սովետահայ գրականության պատմության պարբերացման խնդիրները» թեմայի մասին ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ասատրյանի զեկուցումը։

Զեկուցման շուրջը ելույթներ ունեցան ընկ. ընկ. Հմ. Սիրասը, Հ. Գյուլիքևխյանը, Ա. Կարինյանը և Հ. Մամիկոնյանը։

Երկրորդ օրը զեկուցումներ լսվեցին «Սոցիալիստական ռեալիզմի մասին» (զեկ. ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Էդ. Թոփչյան) և «Դրական մարդու կերպարը սովետական գրականության մեջ» (զեկ. ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Հարությունյան) թեմաներով։

Զեկուցումների շուրջը բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ընկ. ընկ. Հր. Քոչարը, Ռ. Վարդազարյանը, Հ. Սիրասը, Հ. Գյուլիքևխյանը, Ա. Կարապետյանը, Ե. Քոչարը։

Գիտական սեսիայի վերջին նիստում զեկուցումներ լսվեցին «Կլասիկ ժառանգությունը և սովետահայ գրականությունը» (զեկ. պրոֆ. Հ. Գյուլիքևխյան) և «Ռուս գրականության նշանակությունը սովետահայ գրականության համար» (զեկ. Ա. Կարինյան) թեմաներով։

Այս զեկուցումների առթիվ ելույթներ ունեցան Հ. Համբարձումյանը, Ռ. Վարդազարյանը, Հ. Սիրասը։

Գիտական սեսիայում բոլոր ելույթ ունեցողները նշեցին քննարկվող հարցերի ակտուալ նշանակությունը, միաժամանակ ցույց տալով զեկուցումների մեջ եղած որոշ վիճելի հարցերը։